ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 323 Ա

ք.Արտաշատ

„15„ հոկտեմբերի 2024թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ 2024 թվականի սեպտեմբերի 3-ին կայացած խորհրդակցության թիվ Վ/115-2024 արձանագրության 3-րդ կետը.

որոշում եմ

1. Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության առողջացման ծրագիր կազմելու և մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծել ժամանակավոր խորհրդատվական խումբ (այսուհետ՝ խորհրդատվական խումբ) հետևյալ կազմով՝

1) Արթուր Մկրտչյան-Արարատի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար,

2) Սուսաննա Կտրակյան-Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

3) Արարատ Գոլեցյան- Արարատի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր իրավաբան,

4) Նաիրա Հայրապետյան- Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ,

5) Արման Հովակիմյան-բժշկական կազմակերպությունների կառավարման և գործառույթների ապահովման հարցերով խորհրդատու,

6) Արմեն Նավասարդյան-բժշկական կազմակերպությունների ֆինանսավորման խորհրդատու,

7) Ռուզաննա Հարությունյան-կազմակերպությունների իրավական խորհրդատու,

8) Հասմիկ Հարությունյան-բժշկական կազմակերպությունների գործառույթների համակարգման հարցերով խորհրդատու:

2. Խորհրդատվական խմբին՝

1) յոթօրյա ժամկետում կազմել ու Արարատի մարզպետին և Առողջապահության նախարարին ներկայացնել «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության առողջացման միջոցառումների 6-ամսյա ծրագիր,

2) իրականացնել առողջացման միջոցառումների ծրագրի կատարման նկատմամբ մշտադիտարկում,

3) ծրագրով նախատեսված միջոցառումների ավարտից հետո, անհրաժեշտության դեպքում, ներկայացնել առաջարկություններ «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության աշխատանքների հետագա կազմակերպման վերաբերյալ:

3. «Արտաշատի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝

1) բժշկական կենտրոնի աշխատանքները կազմակերպելիս առաջնորդվել խորհրդատվական խմբի ներկայացրած ծրագրով,

2) յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 3-օրյա ժամկետում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ըստ պահանջի, Արարատի մարզպետին և խորհրդատվական խմբին ներկայացնել հաշվետվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**